Քննարկումներ փաստաբանների

17.05.2012 12:05

Հարգելի փաստաբաններ

Հայտնում ենք, որ http://www.facebook.com "ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ" էջում ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբանների միջև ծավալվել են քննարկումներ՝ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբան Գևորգ Գյոզալյանի տեղադրած հետևյալ նյութի կապակցությամբ.

"*Հարգելի փաստաբաններ, ըստ Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշման, այսուհետ ստորադաս դատարանները կարող են ապացույցները չհետազոտեն և դա երբեք ու երբեք դատավարական նորմի խախտում չի կարող համարվել: Երկուշաբթի պատրաստվում եմ այդ իրավաբանական նոր հայտնագործության մտքի գոհարը հրապարակել բոլոր հնարավոր միջոցներով ու օրենքի սահմաններում, իրավաբանական պատերազմ հայտարարել հիմնարկի պետերին՝ գերխնդիր դնելով օր առաջ ազատվել այն ամենից ինչը բռնաբարում է իրական պրոֆեսիոնալ արդարադատությունը: Առաջարկում եմ բոլոր առողջ մտածելակերպով մարդկանց, եթե կունենաք այնպիսի աղաղակող փաստեր, որոնք ցույց են տալիս Վճռաբեկ դատարանի իրական դեմքը, հրապարակայնացնել եւ համատեղ ուժերով պայքարել դրա դեմ: Իմ գրասենյակի դռները բաց են առողջ մտածելակերպով մարդկանց համար:":*

Քննարկումների արդյունքում առաջարկվել է, որ փաստաբանները միանան, կազմակերպեն և իրականացնեն գործադուլ՝ որպես խախտումների դեմ պայքարի միջոց:

Նշվածի կապակցությամբ ՀՀ Փաստաբանների պալատում կազմակերպվելու է Ակումբի նիստ, որին քննության կառնվի ներկայացված բոլոր կարծիքները և կկայացվի վերջնական որոշում:

Խնդրում ենք լինել ակտիվ և ներկայացնել Ձեր դիրքորոշումը:

Հարգանքով

ՀՀ Փաստաբանների պալատ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })